

- 67 Բայց յոյժ աւանդ Կեսարիոյ  
Հովուաց քաջաց մեծ աթոռոյ,  
Որ ի փարախ հօտին նախնւոյ  
Արդ նշմարէ զայլ ընդ այլոյ:
- 68 Իսկ Սարգիս մեր ոչ դադարէր,  
Ի ծովածուփ նաւն յոր ինքն էր,  
Սաստեղ ալեաց որչափ հօնար էր  
Թէ եւ մըրբիկն անդադար էր:
- 69 Անցեալ այսպէս կըրկին ամաց՝  
Սարգիս անտի ըստ պատգամաց՝  
Յօհան, Գ՞րիգոր պատրիարգաց՝  
Աւ Բիւզանդիա չուեալ գընաց:
- 70 Որք կոչէին զինքն անդանօր,  
Օգնել իւրեանց հանապաղօր,  
Աւ նըւաճել Յունաց զոյժ զօր,  
Որ մարառէր ընդ Հայս զայն օր:

### ԵՐԳ ԶՈՐՐՈՐԳ

Որ համասօտէ 'գօգէպ ինչ միջարկեալ,  
Յորում երեւին Սարգ՝ սի հրմուցեալ,  
Ջանք եւ աշխատանք՝ հրնար ճարակեալ  
Յօգուտ մեր ազգի եւ Հօրն հալածեալ:

- 1 Եւ արգ՝ աղգ Յունաց՝ տոչորեալ խեթիւ,  
Կիզիւր նախանձու՝ ի գիշեր 'ւ ի տիւ,  
Աւ վայելչութեան՝ զօր ունին հաղիւ  
Հայք յԵրուսաղէմ՝ երկնային շնորհիւ:
- 2 Ուստի նենգութեամբ՝ եւ զըրպարտ բանիւ,  
Որպէս յայլ նըւագ՝ սսկեով եւ ջանիւ,  
Ի Սուրբ Յակոբայ վանել զՀայս գանիւ,  
Հաճել փութային՝ զայլազգիս սերտիւ: